ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԾ. Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ՝ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԾ. Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋԵԱՆԻՆ,
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԵԱՑ ԹԵՄԻ
ՈՐ Ի ԳԱՒԱՌ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք, որ այս տարի նշում է Ձեր քահանայական ձեռնադրութեան 25-ամեակը և եպիսկոպոսական ձեռնադրութեան 15-ամեակը:

Նախ գնահատում ենք Թեմական Խորհուրդի գաղափարը՝ արժանաւորապէս տօնելու այդ զոյգ հանգրուանները Ձեր հոգևորական կեանքի և գործունէութեան:

Քաջաձանօթ ենք այն ամբողջական և անվերապահ սիրոյն և հաւատարիմ ու նախանձախնդիր նուիրաբերման, որ ցոյց տուիք այնքան պերճախօս կերպով, բայց գովելի համեստութեամբ Ձեր հոգևորական սպասաւորութեան ամբողջ շրջանին: Դուք տէր կանգնեցիք Ազէրպէյջանի, յատկապէս Բաքուի մեր սիրեցեալ ժողովուրդին, մանաւանդ այն տառապալից օրերին, երբ նրանք զոհ դարձան ազգերի իշխանութեանց վայրագ վերաբերումին:

Դուք Ձեր կարողութեան գերագոյն չափով Ձեր նպաստը բերիք Հոգևոր Ճեմարանի Տեսչական և դաստիարակչական այնքան նուիրական գործին:

Իսկ այս վերջին տարիներին Դուք ամէն ջանք ի գործ էք դնում՝ Գեղարքունեաց պատմական Թեմում կրօնական ու ազգային նոր շունչ տարածելու տեսակէտից կազմակերպական, վարչական և կրօնադաստիարակչական ու շինարարական մարզերում:

Ի գնահատութիւն Ձեր 15-ամեայ եպիսկոպոսական սպասաւորութեան՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզ շնորհում ենք

ԷՐԶՈՒԹԵԱՆ պատիւ և տիտղոս:

Աղօթում ենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի շնորհի բազում տարիներ լիառատ ու բեղմնալից սպասաւորութեամբ՝ Գեղարքունեաց Թեմին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 9 Նոյեմբերի
Ցամի Տեառն 1998 և ի Թուին Հայոց ՌՆԽԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/204